

Տ. ՍԵՐՈՎԲԵ ՎԱՐԴԱՊԵՏ ԻՍԱԽԱՆՅԱՆ

Ծնվել է 1963 թ. մայիսի 12-ին Իրանի Հայզարջրիբ հայաբնակ գյուղում:

1969 թ. ընտանիքով հայրենադարձվել են Հայաստան և բնակություն հաստատել նախ Հոկտեմբերյան, ապա Էջմիածին քաղաքներում:

1970—1980 թթ. սովորել և ավարտել է Էջմիածին քաղաքի № 1 միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1981—83 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո շարունակել է ուսումը հոգևոր ճեմարանում:

1986 թ. փետրվարի 14-ին, Տառընդառաջի տոնին, սարկավագ է ձեռնադրվել՝ ձեռամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի:

1986 թ. դեկտեմբերին պաշտպանել է ավարտական՝ «Բարսեղ Մաշկևորցու բարոյագիտական հայացքները» թեմայով և արժանացել «քաջալավ» գնահատականի:

1987 թ. հունիսի 7-ին, Հոգեգալստյան տոնին, կուսակրոն քահանա է ձեռնադրվել՝ ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապայանի:

Հետ ձեռնադրության, պաշտոնի է նշանակվել Այեք և Մարի Մանուկյան Գանձատանը նախ որպես վարիչի օգնական, ապա որպես վարիչ:

1988 թ. օգոստոսին ստանձնել է Ս. Տաթև վանքի վանահոր պաշտոնը, իսկ 1988 թ. նոյեմբերին նշանակվել է Սյունյաց թեմի առաջնորդի օգնական: